ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

21.01.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ 28 -Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ, 35-րդ և 48-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի <<Գորիս համայնքի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 90-Ն որոշումը, 2019 թվականի օգոստոսի 20-ի <<ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրների ուղղված սեփականա լիազորությունների և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 69-Ա որոշումը և ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի <<Սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության>> հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 21-ին կայացած նիստի արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի <<Գորիս համայնքի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 90-Ն որոշման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ>> հոդվածով նախատեսված հատկացումների հաշվից Գորիս համայնքի հինգ բնակչի տրամադրել 470 000 (չորս հարյուր յոթանասուն հազար)ՀՀ դրամ դրամական աջակցություն ըստ՝ հավելվածի:
2.Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ